

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.13-րդ կետերի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Արտանիշ համայնքը սնող 2004-2008 թվականներին կառուցված և չշահագործված 5950 գծմ միջին ճնշման գազատարի շինարարությունում գույքագրում կատարելու և թերությունների ակտ կազմելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Խաչատրյան Ս. - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ, նախագահ

Սողոյան Վ. - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի գլխավոր մասնագետ

Բայբուրտյան Կ. - <<<< ԿԱ ԳՏՏՁ ԾԻԳ>> ՊՀ շինարարության վերահսկման բաժնի ճարտարագետ /համաձայնությամբ/

Քոչարյան Ս. - <<Վեհո Ալյանս>> ՍՊԸ աշխատակից / համաձայնությամբ/

Շուշանյան Կ. - Արտանիշ համայնքի ղեկավար / համաձայնությամբ/

2. Հանձնաժողովին՝ գազատարի գույքագրման ակտը մինչև ս/թ հունվարի 30-ը ներկայացնել մարզպետին:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Դ. Հովհաննիսյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից: